



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

11 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 97

Ձեռնարկողը՝

<<Հրազդան ցեմենտ քորփորեյշն>> ՍՊԸ
ք. Հրազդան, Գործարանային 1

Գործունեությունը՝

**Մաքրավանի մերգելային կրաքարերի հանքավայրի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվերվություն**
Կոպայք մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 97

<<27>> 11 2018թ.

**Մաքրավանի մերգելային կրաքարերի հանքավայրի արդյունահանման նախագծի
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնակող՝ <<Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն>> ՍՊԸ
Նախագծող՝ <<Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն>> ՍՊԸ
Ներգրավված փորձագետ՝ Շ. Խաչատրյան
Ներկայացված նյութեր՝ Աշխատանքային նախագծի
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
(ՇՄԱԳ) հաշվետվություն,
նախագծային փաստաթղթեր և գծագրական
նյութեր
Տեղադրման վայրը՝ Կոտայքի մարզ, ք. Հրազդան /Ա կատեգորիա/

Մաքրավանի մերգելային կրաքարերի հանքավայրի բացահանքի աշխատանքային նախագիծը կազմվել է «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա՝ 50 տարի ծառայման ժամկետով:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից 24.12.2004թ. N51 որոշումով, օգտակար հանածոյի պաշարներն ըստ Բլոկ1-С, հաշվարկված՝ 12726138.0տ, արդյունահանված՝ 181.118տ, ընդամենը՝ 12545020.0տ, իսկ մակաբացման ապարների ծավալը՝ 70770.0մ³:

Մաքրավանի մերգելային կրաքարերի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում,, Մաքրավան գյուղից 1.0-1.2կմ դեպի հարավ-արևելք: Բացահանքի օտարման տարածքը կազմում է 6.35հա, նրա վերջնական եզրագծի մեջ ներառված օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են 965.4հազ.մ³ կամ 2374884.0տ:

Նախագծով նախատեսվում է.



- հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից ելնելով տեղամասը մշակել ընդլայնական միակողանի մշակման համակարգով, մակաբացման ապարները դեպի արտաքին լցակույտեր տեղափոխումով,
- օգտակար հանածոն մշակել 5.0մ բարձրության ենթաստիճաններով, որոնք բացահանքի եզրագծում միավորվում են՝ 10.0մ բարձրության հանքաստիճաններով,
- մարված հանքաստիճանների միջև թողնել 3.0մ լայնության անվտանգության բերմաներ,
- արդյունահանած մերգելային կրաքարերը տեղափոխել Հրազդանի ցեմենտի գործարան,
- արտադրական հրապարակում տեղադրել կոնտեյներային տիպի տնակներ,
- տեխնիկական և խմելու ջուրը մատակարարել ավտոցիստեռներով:

Մաքրավանի մերգելային կրաքարերի հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները հնարավորություն են ընձեռում հանքարդյունահանման աշխատանքներն իրականացնել բաց լեռնային եղանակով:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմելու է.

- 19310.0մ³ կամ 47500.0տ՝ ըստ կրաքարերի մարվող զանգվածի,
- 17860.0մ³ կամ 43935.0տ՝ ըստ արդյունահանվող զանգվածի:

Բացահանքում լեռնային աշխատանքները կատարվելու են շուրջտարյա աշխատանքային ռեժիմով: Աշխատանքային օրերի թիվը տարեկան ընդունվում է 260 օր, 8-ժամյա աշխատանքային հերթափոխով:

Բացահանքային դաշտի շահագործման ընթացքում ընդունված են օգտակար հանածոյի նախագծային հետևյալ կորուստները:

1. Կորուստներ, որոնք կապված են հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում՝ կազմելով 65647.0մ³ կամ 6.8%:

2. Կորուստներ, որոնք պայմանավորված են օգտակար հանածոյի որակը պահպանելու համար օգտակար մակաբացման ապարների հեռացման հետ, երբ հեռացվում է նաև օգտակար հանածոն: Այդ կորուստները կազմում են 6760.0մ³ կամ 0.7%: Ընդհանուր բացահանքային կորուստները կազմելու են 72407մ³ կամ 7.5%:

Բացահանքը շահագործվել է նախորդ տարիներին, անհրաժեշտ ենթակառուցվածքներն ստեղծված են, ուստի լեռնակապիտալ աշխատանքների անհրաժեշտությունը բացակայում է: Նախագծվող բացահանքի տեղանքն ունի թեք լեռնային ռելիեֆ, ուստի ամեն մի աշխատանքային հորիզոնի բացում կատարվում է մուտքային ավտոճանապարհից՝ բացող կիսախրամների անցումով: Կիսախրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 12.0մ:

Հանքարդյունահանման աշխատանքներն իրականացվելու են մերգելային կրաքարերի զանգվածի նախնական փխրեցումից հետո:

Փխրեցման համար օգտագործվելու է բուլդոզեր-փխրեցուցիչ: Արտաչափերը մանրացվելու են էքսկավատորի բազայի վրա կազմակերպված հիդրավիկ մոլորեցումով:

Բացահանքից մերգելային կրաքարերի տեղափոխումը, մինչև ցեմենտի գործարան, որը գտնվում է բացահանքից միջինը 8.0կմ հեռավորության վրա,



նախատեսվում է իրականացնել KAM A3-5511 մակնիշի ավտոինքնաթափերի միջոցով: Մակաբացման ապարների տեղափոխումը՝ միջինը 300.0մ հեռավորությամբ, կատարվելու է KAM A3-5511 մակնիշի ավտոինքնաթափերով, հաշվի առնելով ապարների փոքր ծավալը, շաբաթը մեկ անգամ:

Բացահանքում տեխնիկական ջուրը նախատեսվում է օգտագործել փոշենստեցման նպատակով: Ջուրը բերվում է KO-002 ջրցան-վացող ավտոմեքենայով՝ Հրազդանի ցեմենտի գործարանի սահմանաքանակի հաշվին: Կենցաղային կեղտաջրերը օրեկան 0.27մ³ ծավալով կլցվեն բետոնային լցարան, որտեղից պարբերաբար կտեղափոխվեն Հրազդան քաղաքի կոյուղու ցանց: Համաձայն նորմատիվների ջրի ծախսը 1.0մ² տարածքում փոշենստեցման համար կազմելու է 0.5լիտր:

Բացահանքի և լցակույտերի տարածքներում ջրահեռացման հատուկ միջոցառումներ չեն նախատեսվում: Գրունտային ջրերը բացահանքի տարածքում բացակայում են, իսկ անձրևաջրերը կհեռանան ներծծման և բնական գոլորշիացման եղանակով:

Հանքավայրը ժամանակին շահագործվել է «Հրազդան-Ցեմենտ» ՓԲԸ-ի կողմից և արդյունահանման աշխատանքները կատարվել են 1.6հա մակերեսով տեղամասում:

Մակաբացման ապարները ներկայացված են փխրուն-բեկորային դեյուլիալ առաջացումներով, հզորությունը տատանվում է 0.2-0.9մ սահմաններում, կազմելով միջինը 0.5մ: Մակաբացման ապարների ընդհանուր ծավալը հանքավայրում կազմում է 70770.0մ³: Մակաբացման միջին գործակիցը կազմում է 0.014մ³/մ³:

Մաքրավանի մերգելային կրաքարերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունները (պատկանելիություն V-VII խմբերի, ըստ СНиП IV-2.82) կանխորոշում են դրանց նախնական փխրեցումը հանույթաբարձման աշխատանքներից առաջ:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, մասնավորապես մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերն ու կենցաղային աղբը: Թափոնները հավաքվելու և պահպանվելու են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար: Կենցաղային աղբը հավաքվելու է տեղադրված հատուկ աղբամաններում և պարբերաբար տեղափոխվելու է Հրազդանի աղբավայր՝ համապատասխան սանիտարական ծառայության կողմից:

Հաշվի առնելով, որ բացահանքի հատակում մնում են օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարներ, արդյունահանման աշխատանքների ավարտին բուն բացահանքի և բացահանքը սպասարկող ենթակառուցվածքների տարածքներում ռեկուլտիվացիոն աշխատանքներ չեն նախատեսվում:

Նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունները նվազեցնելու կամ մեղմելու նպատակով, ըստ նախագծային փաստաթղթերի, նախատեսվում է.

- փոշենստեցման նպատակով բացահանքի, աշխատանքային հրապարակների, մերձատար և մուտքատար ավտոճանապարհների մակերևույթի ինտենսիվ ջրում /օրական երկու անգամ/ տարվա շոգ և չոր եղանակներին,



- նավթամթերքների, քսայուղերի պահեստների տեղադրում բետոնապատ մակերեսների վրա,

- հողի բերրի շերտի հանում, պահեստավորում և պահպանում՝ բացառելով դրա որակական հատկանիշների վատթարացումը:

Լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 0.95հա, այդ թվում վերին հարթակինը՝ 0.18հա: Շեպի թեքման անկյունը՝ 32-35°: Ապարները լցակույտում կուտակվելու են 1 հարկով: Լցակույտաառաջացումը կատարվում է բուլդոզերային եղանակով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում նախատեսվում է լցակույտի վերին հարթակի հարթեցում 0.2հա մակերեսով: Ռեկուլտիվացված միավոր տարածքի համար պահանջվող ծախսերը՝ 260.1 դրամ/մ²: Արդյունահանված օգտակար հանածոյի միավոր զանգվածի համար վերակուլտիվացիայի անհրաժեշտ ծախսերը՝ 0.52 դրամ/մ³: Փակման շրջանի մոնիթորինգի ծրագրի արժեքը գնահատվում է 600.0 հազ.դրամ: Այս գումարը կվերահաշվարկվի հանքի փակումից առաջ, հաշվի առնելով այդ ժամանակի գործող գները:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերի փորձաքննության արդյունքները, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, 21.05.2018թ.-ին արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության N1182 եզրակացությունը, առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների դիտողություններն ու առաջարկությունները, Հրազդանի քաղաքային համայնքի տարածքում իրականացված հանրային քննարկումների արդյունքները, ներգրավված փորձագետի եզրակացությունը, կարելի է անել հետևյալ եզրահանգումները:

Մերգելային կրաքարերի հանքավայրի նախատեսվող շահագործումն իրականացվելու է Հրազդան քաղաքային համայնքի սահմաններում բաց եղանակով՝ 50 տարի ժամկետով, արտաքին լցակույտաառաջացմամբ: Հանքավայրը գտնվում է բնակելի տարածքների /մոտ 120.0մ հեռավորություն/, <<Հրազդան>> դերիվիացիոն ջրամբարի և ռեկրեացիոն գոտու անմիջական հարևանությամբ, ուստի հանքավայրի շահագործման դեպքում դրանք կկրեն զգալի ազդեցություն:

09.11.2018թ. Հրազդան քաղաքի համայնքապետարանում իրականացված հանրային քննարկումների ժամանակ մտահոգություն է արտահայտվել խմելու ջրի հիմնախնդիրների և դրա հետ կապված ջրաղբյուրների պահպանման ու դրանց նպատակային օգտագործման վերաբերյալ՝ նշելով, որ շահագործվող տարածքից ոչ հեռու գտնվում են Հրազդան, Ծաղկաձոր, Աբովյան, Չարենցավան քաղաքներին ջուր մատակարարող աղբյուրները: Ինչպես նաև հնչեցին առաջարկություններ և դիտողություններ՝ հանքահումքի տեղափոխման նպատակով Հրազդան-Բջնի միջհամայնքային ճանապարհը շահագործելու (ոչ ավել 10.0տ բեռնափոխադրման սահմանափակումով), հանքի տարածքի սահմանները ցանկապատելու և համապատասխան նախագգուշացնող ցուցանակներ տեղադրելու անհրաժեշտության վերաբերյալ՝ հարակից միջհամայնքային ճանապարհի և երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով:



Փորձաքննական հիմնավորումներ

1. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հոդված 18-ի, 2-րդ մասի, 8-րդ կետի՝ «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից «Մաքրավանի մերգելային կրաքարերի հանքավայրի շահագործման» աշխատանքային նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունը կազմելիս պետք է հաշվի առնվեր նախատեսվող գործունեության համապատասխանությունը տվյալ տարածքի համար հաստատված հիմնադրության փաստաթղթին: Համաձայն 27.12.2007թ. ՀՀ կառավարության N 1597-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքային համայնքի (քնակավայրի)» գլխավոր հատակագծի հանքավայրի հարակից տարածքում՝ բլրից հարավ, բլրի լանջի ստորոտին, ջրամբարի ափամերձ գոտում նախատեսված է ռեկրեացիոն գոտու կազմակերպում:

2. ՀՀ Կոտայքի մարզի Մաքրավանի մերգելային կրաքարերի հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատման մասին N 51 որոշմամբ՝ օգտակար հանածոյի ամրությունը չոր վիճակում տատանվում է 358-ից 729 կգ/սմ² սահմաններում, որը համապատասխանում է VII-րդ կարգի լեռնային ապարների: Նշված հանքավայրի համար, համաձայն ՄՆ 245-71-ի նախատեսված է 300.0մ սանիտարապաշտպան գոտի, ինչն ըստ ներկայացված փաստաթղթերի պահպանված չէ: Միաժամանակ ըստ քամիների վարդի, գերակշիռ քամիները փչում են հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք, ուստի հանքի շահագործման արդյունքում հանքափոշին և արտանետումներն ուղղված կլինեն մոտ 120.0մ հեռավորության վրա գտնվող քնակելի գոտի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊԸ-ի Մաքրավանի մերգելային կրաքարերի հանքավայրի արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ՝

Գլխ. Մասնագետ՝



Ա. Դոնոյան

Կ. Մովսիսյան